Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-046-22.09.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5.2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Շրջիկ առեւտրի իրականացման համար նախատեսված թույլատրելի վայրերը գծանշվում եւ համապատասխան նշանով կահավորվում են Երեւանի քաղաքապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն:»:

Հոդված 2. Օրենքի 5.3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Տեսուչն իրավունք ունի շրջիկ առեւտրի կետը կամ տրանսպորտային միջոցը տեղափոխելու դրա համար նախատեսված հատուկ տարածք (այսուհետ՝ հատուկ տարածք), եթե՝

1) վաճառողը չունի շրջիկ առեւտրի իրականացման թույլտվություն եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը եւ անհապաղ չի ազատում շրջիկ առեւտրի իրականացման համար Երեւան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վայրը կամ բացակայում է նշված վայրից:

2) վաճառողը թույլատրված վայրերից դուրս իրականացնում է վաճառք կամ մատուցում է ծառայություններ եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը կամ բացակայում է նշված վայրից:

3) վաճառողը գործունեություն է իրականացնում սահմանված պահանջների եւ պայմանների խախտմամբ եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը եւ անհապաղ չի ազատում շրջիկ առեւտրի իրականացման համար Երեւան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վայրը կամ բացակայում է նշված վայրից, բացառությամբ Օրենքի 5.3-րդ հոդվածի 1.1 մասով նախատեսված դեպքերի:

4) տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) կայանել է ոչ իր կողմից ամրագրված՝ սահմանված վայրերից մեկում եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը եւ անհապաղ չի ազատում շրջիկ առեւտրի իրականացման համար Երեւան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վայրը կամ բացակայում է նշված վայրից:

5) շրջիկ առեւտրի թույլտվություն ստացած անձը սահմանված ժամը լրանալուց հետո չի ազատել շրջիկ առեւտրի իրականացման համար տրամադրված վայրը եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը եւ անհապաղ չի ազատում շրջիկ առեւտրի իրականացման համար Երեւան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վայրը կամ բացակայում է նշված վայրից:»:

Հոդված 3. Օրենքի 5.3-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.1-րդ մասով.

«1.1. Շրջիկ առեւտրի համար նախատեսված առանձին վայրերում ավագանու որոշմամբ շրջիկ առեւտրի կետին կարող է թույլատրվել կայանել նաեւ սահմանված ժամը լրանալուց հետո:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Կ-046-22.09.2021-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5.2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝
«3. Շրջիկ առեւտրի իրականացման համար նախատեսված թույլատրելի վայրերը գծանշվում եւ համապատասխան նշանով կահավորվում են Երեւանի քաղաքապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն:»:
Հոդված 2. Օրենքի 5.3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.
«1. Տեսուչն իրավունք ունի շրջիկ առեւտրի կետը կամ տրանսպորտային միջոցը տեղափոխելու դրա համար նախատեսված հատուկ տարածք (այսուհետ՝ հատուկ տարածք), եթե՝

1) վաճառողը չունի շրջիկ առեւտրի իրականացման թույլտվություն եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը եւ անհապաղ չի ազատում շրջիկ առեւտրի իրականացման համար Երեւան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վայրը կամ բացակայում է նշված վայրից:
2) վաճառողը թույլատրված վայրերից դուրս իրականացնում է վաճառք կամ մատուցում է ծառայություններ եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը կամ բացակայում է նշված վայրից:
3) վաճառողը գործունեություն է իրականացնում սահմանված պահանջների եւ պայմանների խախտմամբ եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը եւ անհապաղ չի ազատում շրջիկ առեւտրի իրականացման համար Երեւան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վայրը կամ բացակայում է նշված վայրից, բացառությամբ Օրենքի 5.3-րդ հոդվածի 1.1 մասով նախատեսված դեպքերի:
4) տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) կայանել է ոչ իր կողմից ամրագրված՝ սահմանված վայրերից մեկում եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը եւ անհապաղ չի ազատում շրջիկ առեւտրի իրականացման համար Երեւան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վայրը կամ բացակայում է նշված վայրից:
5) շրջիկ առեւտրի թույլտվություն ստացած անձը սահմանված ժամը լրանալուց հետո չի ազատել շրջիկ առեւտրի իրականացման համար տրամադրված վայրը եւ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը (շահագործողը) անհապաղ չի դադարեցնում տրանսպորտային միջոցից կամ դրանց կցորդներից ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը եւ անհապաղ չի ազատում շրջիկ առեւտրի իրականացման համար Երեւան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վայրը կամ բացակայում է նշված վայրից:»:
Հոդված 3. Օրենքի 5.3-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.1-րդ մասով.
«1.1. Շրջիկ առեւտրի համար նախատեսված առանձին վայրերում ավագանու որոշմամբ շրջիկ առեւտրի կետին կարող է թույլատրվել կայանել նաեւ սահմանված ժամը լրանալուց հետո:»:
Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-046-22.09.2021-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	*ՀՀ կառավարություն*	Հոդված 3	Հաշվի առնելով, որ ««Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածով լրացվող 5.3-րդ հոդվածի 1.1 մասով նախատեսվում է առանձին վայրերում ավագանու որոշմամբ շրջիկ առևտրի կետին թույլատրվել կայանել նաև սահմանված ժամը լրանալուց հետո, ուստի առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 5.3 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «վայրից» բառից հետո լրացնել «, բացառությամբ Օրենքի 5.3-րդ հոդվածի 1.1 մասով նախատեսված դեպքերի» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է: